ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 9 - 10 (16812) ՇԱԲԱԹ 1 ՓԵՏՐՎԱՐԻ 2020Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ

ԳՈՐԾԱԴԻՐ

ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄԸ՝ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Հունվարի 30-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Վարչապետը հակիրճ հանրագումարեց գործադիր իշխանության նախաձեռնությամբ աճուրդի դուրս բերած 100 տարբեր նշանակության կառույցների իրացման գործընթացը՝ նշելով, որ ներկա դրությամբ կառավարության կողմից բիզնեսին առաջարկած կառույցներից 38-ը արդեն սեփականաշնորհվել է, ինչի արդյունքում, երկրի բյուջեն համալրվել է պատկառելի գումարներով:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԲԱՆԱՁԵՎԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԷ»

Հունվարի 28-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին՝ որպես Եվրախորհուրդը նախագահող երկրի ղեկավար, հանդես եկավ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում:

Իր խոսքում, Վրաստանի նախագահն անդրադարձավ Եվրախորհրդին անդամակցությունից հետո անցած 21 տարիների ընթացքում երկրի եվրոպական եւ եվրատլանտյան քաղաքական կողմնորոշմանը, միջազգային այդ կազմակերպություններին անդամակցության նպատակով Վրաստանի կողմից ձեռնարկած քայլերի, երկրում իրականացված բարեփոխումների, Ռուսաստանի ապակառուցողական քաղաքականության, երկրի բռնազավթված տարածքների թեմաներին:

- Եվրախորհրդին անդամակցությունն արդեն իսկ իրականացված երազանք էր Եվրոպա մուտք գործելու համար, եւ մեր ուղին երբեք չի փոխվել: Մենք աստի-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԱՀԱԶԱՆԳ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՆ»

Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի հրամանագրով, Վրաստանում կորոնավիրուսի հնարավոր տարածումից խուսափելու նպատակով, Վրաստանում Չինաստանից միջազգային չվերթերը դադարեցվել են ընթացիկ տարվա հունվարի 28-ից մինչեւ ծմռան սեզոնի ավարտը՝ 2020 թվականի մարտի 29-ը:

Կորոնավիրուսի հնարավոր տարածումից խուսափելու եւ հնարավոր տարածման դեպքում արդյունավետ արձագանքելու նպատակով, Վրաստանի կառավարությունը հրապարակել է համապատասխան հրաման եւ գործողությունների ծրագիր:

Հրամանագրի համաձայն, ըստ իրավասության, յուրաքանչյուր գերատեսչությանը հանձնարարվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ: Միջոցառումները համակարգում է Վրաստանի առողջապահության նախարարությունը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ՄՈՒՆԻՑԻՊԱԼԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վրաստանի տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարարության մունիցիպալային զարգացման հիմնադրամը ներկայացրեց 2019 թվականին կատարած աշխատանքների հաշվետությունը:

Իր խոսքում, Վրաստանի առաջին փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարար Մայա Ցքիտիշվիլին նշեց, որ 2019 թվականին մունիցիպալային զարգացման հիմնադրամը ներգրավվեց երկու նոր նախագծերում: Դրանք հանրակրթական ենթակառուցվածքների եւ բռնագաղթվածներին բնակարաններով ապահովման ծրագրերն են:

Մայա Ցքիտիշվիլու հայտա-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀՈՒՆՎԱՐԻ 28-Ը ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐ Է

ՆՇՎԵՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ 28-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Հունվարի 28-ին Հայաստանը եւ համայն հայությունը նշեցին Հայոց բանակի օրը: Նորանկախ Հայաստանի Հայոց բանակը ծնվեց 1992-ի հունվարի 28-ին, երբ ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի հրամանագրով ստեղծվեց Հայաստանի պաշտպանության նախարարությունը:

Հայկական բանակի 28-րդ տարեդարձի առթիվ, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի, Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի եւ Ազգային անվտանգության խորհրդի անդամների հետ, պաշտպանության նախարարության եւ Զինված ուժերի ղեկավար կազմի ուղեկցությամբ, այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցեց իրենց կյանքը Հայրենիքի անկախության համար զոհաբերած հայորդիների հիշատակին:

Ծաղիկներ դրվեցին 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմի հերոսների, սպարապետ Վազգեն Սարգսյանի, Անդրանիկ Օզանյանի շիրիմներին եւ ծաղկեպսակ՝ զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշահամալիրին:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ, ՊԱՐՈՆ ՍԻՆԱՆՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔԻ ԳՈՐԾԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԸ ՎՐԱՍՏԱՆ

Հունվարի 31-ին իր անդրանիկ աշխատանքային այցով Թբիլիսի ժամանեց Հայաստանի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Զարեհ Սինանյանը:

Այցի շրջանակներում, Զարեհ Սինանյանը կայցելի Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցի, «Հովհաննես Թումանյանի տուն», Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի շինհրապարակ, Հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն:

Սփյուռքի գործերով հանձնակատարը կհյուրընկալվի նաեւ Թբիլիսիի թիվ, թիվ 104, 103 հանրային դպրոցներում, «Վրաստան» թերթի խմբագրությունում: «Հայարտուն» կենտրոնում նա հանդիպում կունենա վիրահայ համայնքի ներկայացուցիչների հետ: Նախատեսվում են Զարեհ Սինանյանի հանդիպումները Վրաստանի գործադիր իշխանության ներկայացուցիչների հետ եւս:

Փետրվարի 4-5-ը Զարեհ Սինանյանը կգտնվի Ախալցիխեում, Ախալքալաքիում, Նինոծմինդայում, որտեղ հանդիպումներ կունենա տեղի իշխանությունների ու համայնքի ներկայացուցիչների հետ: Փետրվարի 5-ին, ավարտելով իր այցը, երեկոյան կվերադառնա Երեւան:

Զարեհ Սինանյանին ուղեկցում է սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի համահայկական ծրագրերի վարչության գիտակրթական ծրագրերի բաժնի պետ Հայկ Ենգիբարյանը:

Նշենք, որ 2017թ. հուլիսին Զարեհ Սինանյանը, որպես ԱՄՆ Գլենդելի քաղաքապետ, ոչ պաշտոնական այցով այցելել է Ախալցիխե, Ախալքալաքի, Նինոծմինդա:

ԵՎՍ ՄԵԿ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՌԱՋԸՆԹԱՑ՝ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հունվարի 24-ին աշխատանքային այցով Հայաստանում գտնվող Վրաստանի արտաքին գործերի փոխնախարար Լաշա Դարսելիան հանդիպում ունեցավ Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի հետ:

Հանդիպմանը կողմերն ընդգծեցին վերջին շրջանում վրացհայկական հարաբերություններում արձանագրված նկատելի առաջընթացը՝ կարեւորելով Վրաստանի եւ Հայաստանի ղեկավարների միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացումը: Այս համատեքստում դրական գնահատվեց երկու երկրների արտաքին գերատեսչությունների միջեւ ձեւավորված արդյունավետ եւ անմիջական

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳՈՐԾԱԴԻՐ

ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՈՒՄԸ՝ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Ինչպես գիտեք, մեզ համար աշխատատեղերի ստեղծումը ամենակարեւոր առաջնահերթություններից է: Վերջին նախաձեռնությունը, որը մենք սկսել ենք երկու ամիս առաջ՝ 100 նոր առաջարկ բիզնեսին, զարգացել է հաջողությամբ: Այսօրվա դրությամբ, ավելի քան 38 կառույց արդեն սեփականաշնորհվել է, եւ մենք ունենք լուրջ բյուջետային եկամուտներ: Այստեղ ամենակարեւորն այն է, որ ինչպես մենք խոստացել ենք մեր տնտեսությանը, մեր բիզնեսին, այս ցանկը միշտ բաղկացած կլինի առնվազն 100 կառույցից: Սա մեր խնդիրն է: Դա նշանակում է արագացված եւ պետության համար արդյունավետ մասնավորեցում, սակայն այստեղ ամենակարեւորն այն է, որ դրանք տնտեսության մեջ նոր աշխատատեղեր են, նոր ներդրումներ, նոր էներգիա,- ասել է Գիորգի Գախարիան:

ԵՎՐԱԿԱՌՈՒՅՑ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանի ԱԳ նախարարն ընդգծեց Եվրոպայի խորհրդի հաջող համագործակցությունը՝ ԵԱՀԿ հետ եւ նշեց երկու կազմակերպությունների կարեւոր դերը Եվրոպա աշխարհամասում եւ ամբողջ աշխարհում՝ մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության զարգացման եւ օրենքի գերակայության ապահովման գործում:

Հունվարի 30-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի նախագահ, Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին ԵԱՀԿ մշտական կոմիտեին ներկայացրեց Եվրոպայի խորհրդի Վրաստանի նախագահության առաջնահերթությունները:

Մանրամասնելով Վրաստանի նախագահության առաջնահերթությունները՝ Դավիթ Զալկալիանին հանձնաժողովի անդամներին ներկայացրեց այն միջոցառումները, որոնք առաջնահերթություններով սահմանված հարցերի կապակցությամբ անցկացվելու են Վրաստանի նախագահության ընթացքում: Ելույթի ժամանակ, նախարարը խոսեց նաեւ ԵԱՀԿ-ի եւ Եվրոպայի խորհրդի տարածքում հակամարտությունների ու տեղում մարդու իրավունքների տեսանկյունից ստեղծված բարդ իրավիճակի մասին:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԱՋՄԵԼ Է 5,2 ՏՈԿՈՍ

Վրաստանի վիճակագրական ազգային ծառայության նախնական տվյալներով, 2019 թվականի դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իրական համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) աճը կազմել է 3,8 տոկոս, իսկ 2019 թվականի միջին իրական աճը սահմանվել է 5,2 տոկոսով:

Գերատեսչության տեղեկությամբ, 2019 թվականի դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, աճ էր նկատվում վերամշակող արդյունաբերությունում, տրանսպորտում, մեծածախ եւ մանրածախ առեւտրում եւ այլն: Նախորդ տարվա դեկտեմբերին նվազում է եղել շինարարության սեկտորում:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՎՍ ՄԵԿ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՌԱՋԸՆԹԱՑ՝ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

համագործակցության մթնոլորտը:

Զրուցակիցները քննարկեցին օրակարգային հարցերի լայն շրջանակ: Գոհունակությամբ նշվեց Վրաստանի եւ Հայաստանի միջեւ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 10-րդ նիստի արձանագրության մեջ տեղ գտած դրույթների կատարման դրական ընթացքը, ընդգծվեց էներգետիկայի եւ տրանսպորտի ոլորտներում համատեղ նախագծերի իրականացման, ինչպես նաեւ զբոսաշրջության, հումանիտար եւ այլ ոլորտներում համագործակցության խորացման կարեւորությունը:

Կողմերը մտքեր փոխանակեցին նաեւ տարածաշրջանային եւ միջազգային արդի խնդիրների ու մարտահրավերների մասին, երկուստեք կարեւորեցին տարածաշրջանում խաղաղության եւ կայունության պահ-



BREXIT

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԼՔԵՑ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Հունվարի 30-ին Եվրամիության խորհուրդը վերջնականապես հաստատեց հանրության կազմից Մեծ Բրիտանիայի դուրս գալու (Brexit) պայմանների վերաբերյալ համաձայնագիրը՝ Բրյուսելի կողմից լիովին ավարտելով գործարքի վավերացման գործընթացը:

Այսպիսով, Մեծ Բրիտանիան արդեն կարող է հունվարի 31-ի կեսգիշերին լքել Եվրամիությունը, որում կմնա 27 անդամ երկիր:

Փետրվարի 1-ից Բրյուսելը եւ Լոնդոնը կկարողանան սկսել նոր հարաբերությունների կառուցումը:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ ԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Եվրամիությունն ընդլայնեց պատժամիջոցները Ռուսաստանի դեմ: Եվրամիության անդամ երկրների նախարարների որոշմամբ, «սեւ ցուցակին» ավելանալու է եւս 7 սուբյեկտ, որ կապված են Ռուսաստանի կողմից բռնագրավված Ղրիմում 2019 թվականի սեպտեմբերին «ընտրությունների անցկացման» հետ:

Խոսքը բռնագրավված Ղրիմի «նահանգապետերի» եւ «ԿԸՀ»-ի անդամների մասին է: Նրանց մուտքը ԵՄ կարգելվի եւ կսառեցվեն նրանց ֆինանսական ակտիվները:

Այժմ, «սեւ ցուցակ» են մտցված 177 ֆիզիկական անձ եւ 44 կազմակերպություն:

ԹՈՒՐՔԻԱ ԵՐԿՐԱՇԱՐԺ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՎ

Հունվարի 24-ին Թուրքիայի Էլազիզ նահանգում տեղի էր ունեցել 6,8 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժ: Ցնցումներն զգացվել էին նաեւ Վրաստանում:

Երկրաշարժի հետեւանքով, զոհերի թիվը հասել է 41-ի:

Աղետի հետեւանքով տուժել է 1607 մարդ: Շենքերի եւ տների ավերակներից փրկարարները դուրս են բերել 45 մարդ:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՀԱՎԱՍՏԻԱՑՆՈՒՄ ԵՄ՝ ՉԵՆՔ ՎԱԽԵՆՈՒՄ ՍՈՒՐ ՀԱՐՑԵՐԻՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻՑ ԻՆՉՊԵՍ ԵՐԿՐԻ ՆԵՐՍՈՒՄ, ԱՅՆՊԵՍ ԷԼ՝ ԵՐԿՐԻՑ ԴՈՒՐՍ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, դեռեւս անցյալ տարվա դեկտեմբերին, ապա՝ ընթացիկ տարվա հունվարին, Ամերիկայի Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների պալատի անդամներ, կոնգրեսականներ, հանրապետական կուսակցության ներկայացուցիչներ Մարկվեյն Մալինը, Ադամ Կիզինգերը, Գերի Քոնոլը եւ ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ղեկավար, հանրապետական սենատոր Ջիմ Ռիշն ու Եվրոպայի ենթահանձնաժողովի ժողովրդավար առաջնորդ, սենատոր Ջին Շահինը նամակով դիմեցին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիային:

ԱՄՆ կոնգրեսականներն ու սենատորները մտահոգություն են հայտնում ընտրական բարեփոխումների վերաբերյալ խոստումը չկատարելու, ընդդիմության ներկայացուցիչների հանդեպ քրեական գործեր հարուցելու եւ ցույցերը ցրելու կապակցությամբ: Սենատորները Վրաստանի կառավարությանը կոչ են անում պահպանել ժողովրդավարական սկզբունքները եւ զգուշացնում, որ, հակառակ դեպքում, հնարավոր է, ԱՄՆ-Վրաստան գործընկերային հարաբերությունները վերանայվեն:

Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան ամերիկյան օրենսդիրների նամակի վերաբերյալ հայտարարեց, որ ռազմավարական գործընկերների կողմից բոլոր հարցերին պատրաստ են պատասխանել երկխոսության ռեժիմում:

- Մեր ռազմավարական գործընկերոջ յուրաքանչյուր հարցի պատրաստ ենք պատասխանել, ինչպես երկրի ներսում, այնպես էլ՝ երկրից դուրս, եւ այդ հարցերը վերաբերելու են երկրի ժողովրդավարական զարգացմանը, երկրի արտաքին քաղաքական կողմնորոշմանը, երկու երկրների միջեւ ռազմավարական հարաբերություններին,- ասաց Գիորգի Գախարիան:

- Բոլորը հասկանում են, որ անդառնալի են Վրաստանի եվրատլանտյան ձգտումներն ու զարգացումը: Մեր գործընկերները կարող են ունենալ հարցական նշաններ, բայց ես ձեզ հավաստիացնում եմ, որ մենք երբեք չենք վախեցել պատասխանել այդ հարցերին կամ տալ կոշտ պատասխան, ինչպես երկրի ներսում, այնպես էլ՝ դրսում: Այնպես որ մենք պատրաստ ենք պատասխանել այդ հարցերին,- նշեց վարչապետը:

Նրա խոսքով, Վրաստանը տարածաշրջանում ունի ամենաարագ զարգացող տնտեսությունը:

ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՁԵ. «ՓԵՏՐՎԱՐԻՆ ԾՐԱԳՐՎԱԾ ԵՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ»



Ըստ Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվածեի, ամերիկյան օրենսդիրների կողմից վարչապետին հասցեագրված նամակներում ներառված հարցերի պատասխանները կտրվեն փետրվարին ծրագրված ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաների Վրաստան կատարելիք այցի ընթացքում:

- Անցած ժամանակահատվածում մենք ունենք նշանակալի ձեռքբերումներ անվտանգության, պաշտպանության, մարդու իրավունքների քրեակատարողական համակարգի բարեփոխումների ուղղությամբ: Բարեփոխումներ են իրականացվում նաեւ սահմանադրության մակարդակով: Այդ ամենն ուղղված էր ժողովրդավարական ինստիտուտների հզորացմանը: Դա փաստ է, եւ այդ մասին մեր ամերիկյան գործընկերները կտեղեկացվեն,- հայտարարեց Արչիլ Թալակվածեն:

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԲՈԼՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ԿՏՐՎԵՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ»

Մեկնաբանելով ամերիկյան օրենսդիրների կողմից Վրաստանի վարչապետին հասցեագրված նամակները՝ Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ նամակում առաջադրված բոլոր հարցերի պատասխանները կտրվեն երկխոսության կարգով:

- Մենք կպատասխանենք բոլոր հարցերին, ավելորդ դրամատիզմը չի համապատասխանում մեր պետական եւ մեր ժողովրդի շահերին,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՈՒՄ

ՄՈՒՆԻՑԻՊԱԼԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րարությամբ, 2019 թվականին մունիցիպալային զարգացման հիմնադրամի բյուջեին հատկացվել էր 367 միլիոն լարի, ինչը 30 տոկոսով գերազանցում էր նախորդ տարվա ցուցանիշը: Առաջին փոխվարչապետի հավաստմամբ, այդ գումարը լրիվությամբ յուրացվեց, այսինքն՝ իրականացվեցին մշակութային ժառանգության հուշարձանների վերանորոգման, զբոսաշրջության ենթակառույցների, մարզահրապարակների, ճանապարհային եւ ջրամատակարարման ենթակառույցների շինարարական-վերանորոգման ուղղություններով իրականացվող բոլոր այն նախագծերը, որոնք ծրագրվել էին տարվա շրջանակներում: Իրականացվող նախագծերի շրջանակներում, ստեղծվեց 15 հազար նոր աշխատատեղ:

Ինչպես նշվեց հաշվետվության մեջ, հիմնադրամն անցյալ տարի սկսեց 250 նախագծերի իրականացումը, ավարտին հասցրեց մինչ այդ սկսած 70 նախագծերով նախատեսված աշխատանքները, որոնց ընդհանուր բյուջետային արժեքը կազմում էր 366 միլիոն լարի: Ավարտվեցին ենթակառույցային այնպիսի նշանակալի նախագծեր, ինչպիսիք էին Բաթումիի եւ Քոբուլեթիի ափամրացուցիչ աշխատանքները, երկրի մասշտաբով 161 հանրակրթական դպրոցների շինարարություն-վերանորոգումը: Ընդ որում, վերջին աշխատանքների համար հատկացվեց 220 միլիոն լարի: Չանտեսվեցին նաեւ նախադպրոցական ենթակառույցները: Մասնավորապես, հիմնադրամի նախաձեռնությամբ, սկսվեցին 76 մանկապարտեզների նախագծման եւ շինարարական աշխատանքները, ինչի համար հատկացվեց ավելի քան 50 միլիոն լարի:

Անցյալ տարի հիմնադրամի կողմից Ծղալտուբոյում, Զուգդիդիում եւ Քութայիսիում սկսվեց բռնագաղթված անձանց բնակարանների շինարարության նախագիծը: 2019-2021 թվականներին, ըստ նախագծի, 2440 ընտանիք ապահովվելու է բնակարանով: Նախագծի իրականացման համար հատկացվել է 162,3 միլիոն լարի: 2019 թվականին հիմնադրամը սկսեց եւ ավարտին հասցրեց Մցխեթայում երկու մասնաշենքի շինարարությունը, որտեղ բռնագաղթված 120 ընտանիք բնակարան ստացավ:

Մունիցիպալային զարգացման հիմնադրամի գործունեությունը տարածվել էր նաեւ երկրի տարածաշրջաններում: Մասնավորապես, հիմնադրամի նախաձեռնությամբ իրականացվող նախագծերը զգալիորեն նպաստեցին երկրամասերում ներքին եւ միջազգային զբոսաշրջության զարգացմանը, բարելավվեցին տեղական ենթակառույցները, խթանեցին նոր աշխատատեղերի ստեղծմանը, նշանակալիորեն նպաստեցին տարածաշրջաններում սոցիալական ու տնտեսական իրավիճակի բարելավմանը:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐՈՆԸ

ԶԱԶԱ ՎԱՇԱՂՄԱՋԵՆ ՀԱՆԴԻՊԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հունվարի 31-ին Վրաստանի կառավարության գրասենյակում կրոնի հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշաղմաձեն հանդիպում ունեցավ ազգային փոքրամասնությունների ղեկավարների խորհրդի անդամների հետ:

Կրոնի հարցերով գործակալության ղեկավարը ներկայացրեց Վրաստանի կրոնական քաղաքականությունը, տեղեկություն հաղորդեց պետության կողմից կրոնական ուղղությունների ֆինանսավորման եւ նրանց մշակութա-կրոնական կառույցների փոխանցման մասին: Անդրադարձ կատարվեց նաեւ համակրոնական ժողովարանի գործունեությանն ու իրականացված նախագծերին: Կազմակերպությունների անդամներին ծանոթացրին եւ որպես նվեր հանձնեցին Վրաստանի կրոնական եւ գործող մշակութա-կրոնական կառույցների՝ գործակալության կողմից մշակված քարտեզներ, համակրոնական օրացույցներ, գործակալության կողմից լույսընծայված «Կրոնները Վրաստանում» եւ «Հավատը ազատության ակտ է» ալբոմները:

Հետաքրքիր շատ դիտողություններ արվեցին առաջիկա ծրագրերի ու նախագծերի վերաբերյալ, հյուրերը «Պետական լեզուն հոգեւոր անձանց համար» նախագծում ներգրավվելու պատրաստակամություն հայտնեցին:

600 ՀԱԶԱՐ ԼԱՐԻԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

Վրաստանի Կրոնի հարցերով պետական գործակալությունը 2020 թվականի հունվարի 20-ի N1/216 հանձնարարականով, կրոնական միություններին խորհրդային ամբողջատիրական ռեժիմի ժամանակ հասցված վնասի մասնակի փոխհատուցման նպատակով, 2020 թվականի պետական բյուջեով հատկացված 4 500 000 լարիից այս փուլում փոխանցվել է 3 500 000 լարի: Այդ գումարից Վրաստանի Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմին հատկացվում է 600 000 լարի:

Բյուջետային գումարներ են նախատեսված նաեւ Վրաստանի Իսլամական թեմին՝ 2 200 000, Վրաստանի հռոմեական կաթոլիկ թեմին՝ 400 000 լարի (ավելի քան 138 հազար դոլար): Վրաստանի հրեական թեմին՝ 300 000 լարի:

2020 թվականի համար մնացած 1 000 000 լարին կբաշխվի ավելի ուշ:

Հատկանշական է, որ 2018-ին նույնպես կրոնական միություններին պետական բյուջեից փոխանցվել էր նույն քանակությամբ փոխհատուցում:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ԺԱՄԿԵՏԱՆՑ ԴԵՂՈՐԱՅՔԸ ՉԻ ԱԶԴԵԼ C ՀԵՊԱՏԻՏԻ ԷԼԻՄԻՆԱՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎՐԱ

Ինչպես արդեն հաղորդել ենք, վրացական մամուլում հայտնվեցին հոդվածներ, որոնց համաձայն, ԱՄՆ-ից ներկրվող C հեպատիտի էլիմինացիայի ծրագրի համար նախատեսված դեղորայքը ժամկետանց է, հետեւաբար, վտանգավոր օգտագործման համար:

Ի պատասխան տարածած լուրերի, Վրաստանի բռնազավթված տարածքներից վերաբնակեցվածների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարությունը հրապարակեց ամերիկյան «Գիլիադ» դեղագործական ընկերության հայտարարությունը, որը կապված է հեպատիտ C-ի էլիմինացիայի ծրագրին: Նշված ընկերությունը վարակի դեմ դեղորայքը Վրաստանին անվճար մատակարարում է 2015 թվականից:

«Վրաստանը գտնվում է հեպատիտ C-ի վերացման միջազգային ջանքերի առաջնագծում, եւ «Գիլիադ» ընկերությունը հպարտ է, որ 2015 թվականից ի վեր աջակցում է ծրագրին: 2019 թվականի տվյալներով, Վրաստանի կառավարությունը մեր կազմակերպության կողմից տրամադրած դեղամիջոցների միջոցով արդեն հաջողությամբ բուժել է 58 000 մարդ»,- ասված է հայտարարության մեջ:

Դեղագործական ընկերությունը արձագանքում է նաեւ Վրաստանին առաքվող դեղորայքի ժամկետի լրանալու մասին տարածված լրատվությանը: Ինչպես ասված է ընկերության հայտարարության մեջ, նման դեպքերը հազվադեպ չեն հանրային առողջապահական ծրագրերում, քանի որ իրականացվում է դեղորայքի անհրաժեշտ քանակից ավելի առաքում:

Ամերիկյան ընկերությունը նշում է նաեւ, որ շարունակելու է Վրաստանում հեպատիտ C-ի վերացման ծրագրի աջակցությունը:

«Գիլիադ»-ը շարունակում է աջակցել ծրագրին: Մենք համագործակցում ենք առողջապահության նախարարության հետ, որպեսզի ապահովենք հեպատիտ C ունեցող Վրաստանի քաղաքացիներին ժամանակակից դեղամիջոցներով»,- ասվում է ընկերության հաղորդագրության մեջ:

Վրաստանի պետական աուդիտի ծառայության հաղորդագրության համաձայն, Հեպատիտ C էլիմինացիայի ծրագրի շրջանակներում, անցել է անվճար ստացված 560 645 083 լարիի արժեք ունեցող դեղամիջոցների ժամկետը:

ՎՐԱՍՏԱՆԸ՝ «ՏԱՐՎԱ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿԻՐ»

«MATKA 2020» միջազգային տուրիստական ցուցահանդեսին Վրաստանը ճանաչվել է «Տարվա տուրիստական նշանակության երկիր»: Ցուցահանդեսը կայացել է Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում:

Հատկանշական է, որ ցուցահանդեսի թիրախային շուկան ներառում է ոչ միայն Ֆինլանդիայի տուրիստական հատվածը, այլ մերձբալթյան երկրները:

Վրաստանի զբոսաշրջության վարչությունն արդեն երրորդ տարին է՝ ակտիվորեն մասնակցում է ցուցահանդեսին:

Ցուցահանդեսն ունի 80 000 այցելու, իսկ միջոցառմանը մասնակցում է զբոսաշրջության 22 500 մասնագետ՝ 86 երկրից:

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԳԻՆԻ է ԱՐՏԱՀԱՆՎԵԼ

2019 թվականին Վրաստանից արտահանվել է մոտ 94 մլն շիշ գինի: Այսպիսի ցուցանիշ Վրաստանի պատմության մեջ գրանցվել է առաջին անգամ: Ներմուծվող հիմնական երկրներն են Ռուսաստանը, Ուկրաինան, Չինաստանը: Աճել է նաեւ պահանջարկը ԵՄ երկրներում: Արտահանման ցուցանիշի է՛լ ավելի բարձրացման նպատակով, զուգահեռ ընթանում են այլ շուկաների ձեռքբերման, ինչպես նաեւ գինու կժերի եւ բիո գինու արտադրման ակտիվացման գործընթացներ:

ԱՃԵԼ ԵՆ ՇՄՈԼ ԳԱԶԻՑ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Բնական գազի արտահոսքի հետեւանքով եւս երկու մահացու դեպք է գրանցվել: Միջադեպը տեղի է ունեցել Ռուսթավիում: Նախնական տվյալների համաձայն, պատճառը սխալ տեղադրված ջրաջեռուցիչն է: Ըստ երեւույթին, սեպտեմբեր ամսի մոնիթորինգի արդյունքում, ապամոնտաժվել էր ջրատաքացուցիչը: Ապամոնտաժված սարքերի ինքնակամ ակտիվացման գործընթացը վերահսկելու նպատակով, մշակվում է օրինագիծ:

ԲԱԹՈՒՄԻԻ ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԵԼ է ՅՈԹ ՏԱՐՎԱ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ

Բաթումիի նախկին քաղաքապետ Գիորգի Երմակովը դատապարտվել է 7 տարվա ազատազրկման: Նույն գործով ձերբակալված Բաթումիի քաղաքապետարանի նախկին բարձրաստիճան պաշտոնյա Արչիլ Վանաձեն անմեղ է ճանաչվել: Եվս մեկ նախկին պաշտոնյա էգրասլան Լոմիձեն ազատազրկման կենթարկվի 6 ամսով:

Հիշեցնենք, որ անցյալ տարի բյուջեից փողերի լվացման եւ աշխատանքային լիազորությունները չարաշահելու մեղադրանքով, ձերբակալվեցին Բաթումիի նախկին քաղաքապետը եւ մի խումբ այլ բարձրաստիճան պաշտոնյաներ: Գործը վերաբերում է Բաթումիում «Էժան տուն» նախագծին, որն այդպես էլ չի իրականացվել, փոխարենը բյուջեից վերցվել է ավելի քան 1 միլիոն լարի:

ՎԵՀԱԺՈՂՈՎ

ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵՆ՝ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ

Հունվարի 27-ին Ստրասբուրգում, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Իրակլի Կոբախիձեն ընտրվեց Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի փոխնախագահ:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի փոխնախագահի պաշտոնում առաջադրվել էր 19 թեկնածու:

Օրենսդիրները դեմ են արտահայտվել միայն Ռուսաստանի պատվիրակության ներկայացուցիչ Պյոտր Տոլստոյի առաջադրմանը: Փոխնախագահի մյուս թեկնածուների քվեարկությունը տեղի չի ունեցել: Փոխնախագահի պաշտոնները կբաժանվեն անդամ պետությունների քվոտաների համաձայն:

Հիշեցնենք՝ նոյեմբերի 27-ից Վրաստանը Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի նախագահող երկիրն է:

Քվեարկությունն անցկացվել է Ստրասբուրգում, Եվրոպայի խորհրդի ձմեռային նստաշրջանի շրջանակներում: Վրաստանի խորհրդարանի մշտական պատվիրակությունը մասնակցում է Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանին: Խորհրդարանական պատվիրակությունը ղեկավարում է Իրակլի Կոբախիձեն:

Բացի այդ, հունվարի 27-ին Եվրախորհրդի նախարարների կոմիտեում, Վրաստանի նախագահության շրջանակներում, ելույթ ունեցավ Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին, իսկ հունվարի 28-ին՝ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ

ՏԵԽՍՏՈՒԳՈՒՄ է ԱՆՑԵԼ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ 60 ՏՈԿՈՍԸ

Վրաստանում գրանցված է ավելի քան 1 300 000 ավտոմեքենա, բայց դրանց որ մասն է երթեւեկում՝ հայտնի չէ, քանի որ Վրաստանում մեքենան գրանցումից հանելը պարտադիր չէ:

Տրանսպորտի ու ավտոճանապարհների ասոցիացիայի նախագահ Դավիթ Մեսխիշվիլին գտնում է, որ գրանցումից հանելը պետք է պարտադիր դառնա: Ըստ նրա, կոպիտ հաշվարկներով տեխզննում է անցել մեքենաների 60 տոկոսը:

Հիշեցնենք՝ 2018-ի հուլիսի 1-ից տեխզննումը պարտադիր դարձավ իրավաբանական անձանց անունով գրանցված, նաեւ պետությանը պատկանող մեքենաների, նույն թվականի հոկտեմբերի 1-ից՝ մինչեւ 3,0 ծավալով շարժիչ ունեցող մեքենաների, իսկ 2019-ից՝ բոլոր տրանսպորտային միջոցների համար: Մարդատարների համար ծառայությունը 60 լարի է (մոտ 20,8 դոլար), բեռնատարների համար՝ 100 լարի (մոտ 34,6 դոլար):

ՊԱԿԱՍԵԼ է ՎՐԱՍՏԱՆԻՑ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

Հարեւան երկրի մաքսային նոր սակագինը վրացական ավտոդիլերներին վտանգի առաջ է կանգնեցնում: Ընթացիկ տարվա սկզբից Հայաստան ներմուծվող մեքենաների քանակը կտրուկ պակասել է: Պատճառը մաքսազերծման գործընթացի վճարների բարձրացումն է: Այդ պատճառով էլ, ավտոդիլերները վերավաճառելու նպատակով նոր սպառողներ են փնտրում: Ըստ վիճակագրության, վերջին չորս տարվա ընթացքում առաջին անգամ Վրաստանից արտահանվող ապրանքացուցակում գերակշռում են ավտոմեքենաները:

ԱՎՏՈՎԹԱՐՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ է, ԻՍԿ ԶՈՀԵՐԻՆԸ՝ ԱՎԵԼԱՑԵԼ

Չնայած օրենքի խստացումների եւ երթեւեկության անվտանգության ոլորտում բազմաթիվ բարեփոխումների, այնուամենայնիվ, ճՏՊ-ի զոհերի վիճակագրությունը շարունակում է մնալ մտահոգիչ:

Վրաստանի ներքին գործերի նախարարության պաշտոնական տվյալներով, 2019 թվականին Վրաստանի ճանապարհներին տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարների հետեւանքով զոհվել է 481 մարդ, ինչը 22-ով ավելի է նախորդ տարվա համեմատ:

Անցած տարի ճանապարհատրանսպորտային պատահարներից տուժել է 7921 մարդ, իսկ 2018-ին այդ թիվը 9047 էր:

Տուժածների թվին զուգահեռ կրճատվել է նաեւ ճանապարհատրանսպորտային պատահարների քանակը: 2019 թվականին տեղի է ունեցել 5839 ճանապարհատրանսպորտային պատահար, 2018-ին այդ թիվը 6452 էր:

Հիշեցնենք, որ ճանապարհային երթեւեկության ոլորտում իրականացված բարեփոխման արդյունքում, տեղադրվեցին «խելացի տեսախցիկներ» եւ անլար պարեկային սարքավորումներ, գործարկվեց բալային համակարգը: Բացի այդ, 2018 թվականից ուժի մեջ մտավ ավտոմեքենաների պարտադիր տեխստուգումը:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԲԱՆԱՁԵՎԸ ԲԱՎԱՐԱՐ Չէ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ճանաբար եւ կայուն կերպով շարունակում ենք Եվրոպա տանող մեր ճանապարհը՝ կառուցելով ժամանակակից եվրոպական պետություն,- հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին:

- Այստեղ մեծ է ձեր վաստակը, ձեր աջակցությունը, նույնիսկ ձեր քննադատությունը: Վրաստանն այս ամենը արել է, չնայած ներկայիս ծանր իրավիճակի, հակամարտությունների, բռնազավթման, լարվածությունների ու սպառնալիքների: Միեւնույն ժամանակ, մենք կառուցում ենք ինստիտուտներ, պաշտպանում մարդու իրավունքները եւ ստեղծում ժամանակակից ժողովրդավարական հասարակություն, որով շատ ենք հպարտանում,- հավելեց նախագահը:

Վրաստանի նախագահի խոսքով, հաջորդ քայլը միջազգային հանրության լիիրավ անդամակցությունն է, որպեսզի Վրաստանն իրեն ցուցադրվի՝ որպես մի երկիր, որը միջազգային գործընկերների հետ միասին կարող է հաղթահարել գլոբալ մարտահրավերները:

Խոսելով բռնազավթված տարածքների մասին՝ Վրաստանի նախագահը նշեց, որ դրանցում մարդու իրավունքների իրավիճակը ծանր է եւ գնալով վատթարանում է:

- Ռուսաստան-Վրաստան պատերազմից անցել է 12 տարի, եւ մեր տարածքի 20 տոկոսը դեռեւս բռնազավթված է:

Բռնազավթված գիծը անընդհատ փոխվում է, եւ անցակետերը հաճախ փակվում են՝ զրկելով Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջանների բնակչությանը տեղաշարժվելու իրավունքից: Սեպտեմբերից փակ է Ցխինվալիի անցակետը, ինչը հաճախ ավարտվում է մարդկային ողբերգություններով: Օրինակ, Մարգո Մարտիաշվիլու մահը: Նրան թույլ չեն տվել բժշկական օգնություն ստանալու նպատակով անցնել Վրաստանի իշխանությունների կողմից վերահսկվող տարածք,- ասաց նախագահը:

Նա խոսեց նաեւ բաժանված գյուղերի մասին, ներկայացրեց մարդկանց առեւանգման փաստերը, դրանց թվում՝ բռնազավթիչ ռեժիմի կողմից բժիշկ Վաժա Գափրինդաշվիլու կալանավորումը: Սալոմե Զուրաբիշվիլին Ռուսաստանին մեղադրեց Եվրամիության դիտորդական առաքելությանը բռնազավթված տարածքներ մուտքի արգելման, ինչպես նաեւ 2008 թվականի հրադադարի մասին համաձայնագրի խախտման մեջ: Սալոմե Զուրաբիշվիլին խոսեց նաեւ Վրաստանի կառավարության խաղաղարար նախաձեռնության մասին՝ նշելով, որ Վրաստանի իշխանությունների խաղաղարար նախաձեռնությունը ուժ չկիրառելու վերաբերյալ մնացել է անպատասխան:

Սալոմե Զուրաբիշվիլու հավաստմամբ, Եվրախորհուրդը բռնազավթված տարածքների մասին բազմաթիվ բանաձեւեր է մշակել:

- Սակայն դա բավարար չէ, այսօր մեզ հարկավոր է շարժում, ներգրավվածություն, փոփոխություն ու լիցքաթափում վարչական բաժանարար գծում եւ Եվրամիության դիտորդական առաքելության ձեռնհասությունը Վրաստանի ողջ տարածքում,- հայտարարեց Վրաստանի նախագահը: